ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/78

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 08.06.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը.

«ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն մասնակցել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին:

Հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել 34, 42, 69, 70, 71, 72, 73 և 74-րդ չափաբաժիններով:

29.05.2018թ. Ընկերությունը ստացել է Հանձնաժողովի թիվ 5 արձանագրությունը, որի համաձայն «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված տեղեկության համաձայն ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանել, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Հայտը ներկայացվել է 23.04.2018թ. և նույն օրը՝ մինչև հայտը ներկայացնելը, Ընկերությունը կատարել է իր հարկային պարտավորությունները՝ 7,200,000 ՀՀ դրամի չափով, որը մուտքագրվել է հարկերի միասնական հաշվին:

Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերության կողմից 23.04.2018թ. կատարված հարկային վճարումները արտացոլվել են միայն 25.04.2018թ.:

Հարկերի միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարումները կատարվել են ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը:

Հանձնաժողովի թիվ 5 Արձանագրությունը ստանալուց հետո Ընկերությունը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ խնդրելով պարզաբանել, թե ինչու՞ է Ընկերության ժամկետանց պարտավորություն ունենալու վերաբերյալ տեղեկություն տրամադրվել Հանձնաժողովին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնից հայտնել են, որ Ընկերության կողմից 23.04.2018թ կատարված վճարումը հարկերի միասնական հաշվում արտացոլվել է 25.04.2018թ. քանի որ Ընկերությունը փոխանցումը կատարել է ժամը 14:00-ից հետո, իսկ 24.04.2018թ. հանդիսացել է ոչ աշխատանքային օր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրվել է նաև տեղեկանք /30.05.2018թ. թիվ 2769/ 23.04.2018թ. դրությամբ առկա հարկային պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունն ունի ընդհանուր 6,144,306 ՀՀ դրամի հարկային պարտավորություն, որից ժամկետանց է 843,670 ՀՀ դրամը, իսկ ինչպես արդեն նշվեց, Ընկերության կողմից կատարվել է 7,200,000 ՀՀ դրամի չափով բյուջետային վճարում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրվել է նաև տեղեկանք /30.05.2018թ. թիվ 2768/ 25.04.2018թ. դրությամբ Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չունի:

Թիվ 2768 և 2769 տեղեկանքների համաձայն՝ Ընկերությունը ունի նաև ավելացված արժեքի հարկի գծով 28,065,480 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ:

Վերը նշվածից բխում է, որ Ընկերության մեղքը տվյալ դեպքում բացակայել է, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է իր հարկային պարտավորությունները, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով այն ավելի ուշ է արտացոլվել համակարգում:

Վերոգրյալ փաստերի և համախատասխան ապացույցների հաշվառմամբ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին ձեռնպահ մնալ լիազորված մարմին դիմելուց:

04.06.2018թ. էլեկտրոնային փոստով ստացվել է Հանձնաժողովի նիստի թիվ 6 Արձանագրությունը, որի 1.4 կետից պարզ է դարձել, որ Ընկերության հիմնավորումները ընդունելի են եղել, և Հանձնաժողովը լիազոր մարմնին դիմելու գործողություն չի իրականացրել:

Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն.

«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

Որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից բխում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունի, իսկ մասնկացելու դեպքում պետք է մերժվի այն սուբյեկտի հայտը, որը այն ներկայացնելու պահի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Ինչպես արդեն նշվեց Ընկերությունը հայտ ներկայացնելու պահի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, քանի որ մինչև հայտ ներկայացնելը՝ 23.04.2018թ. կատարել է իր հարկային պարտավորությունները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից Ընկերության ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու մասին տեղեկություն ներկայացնելը չի համապատասխանել իրականությանը և դա ընդամենը տեխնիկական միջոցների ոչ ճշգրիտ աշխատանքի արդյունք է:

Նույնիսկ հարկային պարտավորությունը կատարելու և հայտը ներկայացնելու ժամերի ուսումնասիրությունից է բխում, որ Ընկերությունը նախ կատարել է հարկային պարտավորությունները, որից հետո միայն ներկայացրել է հայտը:

Զուտ ֆորմալ առումով հարցը դիտարկելու պարագայում ստացվում է, որ Ընկերությունը 23.04.2018թ. ունեցել է հարկային պարտավորություն, քանի որ վճարված գումարը չի նստել համապատասխան հաշվեհամարներին, սակայն տվյալ դեպքում առավել կարևոր է անդրադառնալ տվյալ իրադրությունում Ընկերության գործողություններին, բարեխղճությանը և իրենից հասանելիք բոլոր գործողությունների կատարմանը և միայն դրանից հետո այդ ամբողջության մեջ գնահատել, թե արդյո՞ք Ընկերությունը թույլ տվել է խախտում, թե՝ ոչ:

Մեր կողմից Հանձնաժողովին ներկայացվել են համապատասխան ապացույցներ այն մասին, որ հայտը ներկայացնելու պահի դրությամբ կատարված են ժամկետանց հարկային պարտավորությունները, դեռ մի բան էլ ավելին՝ Ընկերությունը ուներ ԱԱՀ գծով գերավճար, ինչի հաշվառմամբ Հանձնաժողովը որոշել է չդիմել լիազոր մարմնին Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն:

Գնումների բողոքարկման խորհրդից խնդրում ենք իրականացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, որի շրջանակներում հատկապես ուշադրություն դարձնել հետևյալին.

- ե՞րբ են Ընկերության կողմից կատարվել հարկային վճարումները,
- ե՞րբ են դրանք արտացոլվել համապատասխան հաշիվներում,
- ինչու՞ են դրանք ավելի ուշ արտացոլվել, այն դեպքում, երբ Ընկերությունը սահմանված ժամկետում է դրանք կատարել,
- արդյո՞ք Ընկերությունը պետք է կրի տեխնիկական միջոցների ոչ ճշգրիտ աշխատելու հետևանքով առաջացող բացասական հետևանքները:

Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով սույն բողոքում նշված հիմքերով և հիմնավորումներով՝ խնդրում ենք դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի 29.05.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով սահմանված «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Տոնոյանը :

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2917 գրությամբ հայտնել է հետևյալը.՝

«ՀՀ ՊՆ կարիքների համար շինանյութի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Օրենսդրությամբ սահմանված կարգով վերջինիս առաջարկվել է ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը, միաժամանակ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ, ունեցել է 848,506 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը և Կարգի 45-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի հայտը և վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ: Քանի որ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 31.05.2018թ. N ԳՐ/ԱԱ/18-34 գրությամբ գնահատող հանձնաժողովին ներկայացվել են լրացուցիչ տվյալներ հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ, գնահատող հանձնաժողովը 01.06.2018թ. կայացած նիստում որոշել է մասնակցի տվյալները չուղարկել լիազորված մարմին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ գնահատող հանձնաժողովը, մերժելով «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի հայտը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ռոման Մարդոյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.04.2018թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3, 05.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4, 29.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5, 01.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 21.06.2018թ. թիվ ԴՎԱ/2917 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ ՊՆ կարիքների համար շինանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 23.04.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն:

«ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 15.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա (Հավելված 1) «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 34-րդ, 42-րդ, 69-ից 74-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության 3.3 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 21.05.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.04.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 848,506 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 29.05.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներկայացված տվյալների, «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 50,000 ՀՀ դրամի չափը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ, և որոշել է Ընկերության հայտը մերժել ամբողջությամբ և վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն երեք աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնեն լրացուցիչ տվյալներ:

01.06.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 31.05.2018թ. N ԳՐ/ԱԱ/18-34 գրությամբ գնահատող հանձնաժողովին ներկայացվել են լրացուցիչ տվյալներ հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

«ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից Հանձնաժողովին տրամադրած տեղեկատվությունն իրականությանը չի համապատասխանել, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել: Վերջինիս խոսքով, 23.04.2018թ. Ընկերությունը կատարել է իր հարկային պարտավորությունները՝ 7,200,000 ՀՀ դրամի չափով գումար մուտքագրելով հարկերի միասնական հաշվին, որից հետո միայն ներկայացրել է հայտը: Սակայն, պարզվել է, որ Ընկերության կողմից 23.04.2018թ. կատարված վճարումներն արտացոլվել են միայն 25.04.2018թ., քանի որ Ընկերությունը փոխանցումը կատարել է ժամը 14:00-ից հետո, իսկ 24.04.2018թ. հանդիսացել է ոչ աշխատանքային օր, այսինքն, հարկերի միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարումները կատարվել են ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը: Վերը նշված փաստերի համադրումից Ընկերությունը եզրակացրել է, որ իր մեղքը տվյալ դեպքում բացակայել է, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում կատարել է իր հարկային պարտավորությունները, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով այն ավելի ուշ է արտացոլվել համակարգում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց Ընկերության կողմից ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը՝ միևնույն ժամանակ կարծիք հայտնեց, որ գնահատող հանձնաժողովի կողմից «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը համապատասխանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն՝ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ, ունեցել է 848,506 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 23.04.2018թ. ժամը 15:53-ին «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ հարկային տեսչության միասնական հարկային հաշվին փոխանցված 7,200,000 ՀՀ դրամի չափով բյուջետային փոխանցման N004158 անդորրագիրը:

- www.petekamutner.am կայքից ստացված կարճապատկերը (screenshot), որտեղ արտացոլված է վերը նշված բյուջետային փոխանցման 25.04.2018թ. մուտքագրված լինելու փաստը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 30.05.2018թ. «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» թիվ 2769 տեղեկանքն առ այն, որ Ընկերությունը 23.04.2018թ. դրությամբ ունեցել է 6,144,306 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն, որից ժամկետանց են՝ եկամտային հարկի գծով՝ 843,670 ՀՀ դրամի չափով, և ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով՝ 4,837 ՀՀ դրամի չափով, հարկային պարտավորությունները (ընդամենը 848,507 ՀՀ դրամ):

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 30.05.2018թ. «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» թիվ 2768 տեղեկանքն առ այն, որ Ընկերությունը 25.04.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը

մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 21.05.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 23.04.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 848,506 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Հարկային պարտավորությունները կատարելու նպատակով՝ Ընկերությունը 23.04.2018թ.-ին հարկերի միասնական հաշվին մուտքագրել է 7,200,000 ՀՀ դրամի չափով գումար:

- Ընկերության կողմից 23.04.2018թ. կատարված վճարումներն արտացոլվել են միայն 25.04.2018թ., քանի որ Ընկերությունը փոխանցումը կատարել է ժամը 14:00-ից հետո, իսկ 24.04.2018թ. հանդիսացել է ոչ աշխատանքային օր:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 30.05.2018թ. «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 25.04.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ նույն օրը՝ մինչև հայտը ներկայացնելը, Ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումը, սակայն հարկերի միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարումները կատարվել են միայն 25.04.2018թ., այսինքն, ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ՝ ապահովելով Կարգի 44-րդ կետով սահմանված պահանջների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ-ի կողմից 08.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ Հանձնաժողովի 29.05.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով կայացված՝ «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**